

Տարբերակ 1

1. Ո՞ր շարքում են Շիրազի ստեղծագործությունները.  
 ա. Բիբլիական, Ավելորդը, Հայ ժողովրդի երգը, Էքսպրոնտ  
 բ. Բիբլիական, Հայ ժողովրդի երգը, Էքսպրոնտ, Գարնանամուտ  
 գ. Հայ ժողովրդի երգը, Էքսպրոնտ, Սպիտակ ծին, Էլի գարուն կգա  
 դ. Էքսպրոնտ, Թագադրում , Էլի գարուն կգա, Արա Գեղեցիկ 0,5
2. Ո՞ր բառն է բաց թողած.  
 Բարձրանամ կապույտ գահը լեռների՝  
 Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,-  
 Հագնեմ ծրանին .....,-  
 Գարնան թագավոր ինձ թագադրեմ...  
 ա. առավոտների գ. արշալույսների  
 բ. վաղորդայնների դ. արևագալի 0,5
3. Ո՞ր բանաստեղծության մեջ է Շիրազը արտահայտում հայրենիքի, հայ ժողովրդի հավերժության գաղափարը.  
 ա. Ձյուն է իջնում... բ. Կտակ  
 գ. Հայ ժողովրդի երգը դ. Թագադրում 0,5
4. Շիրազի ո՞ր ստեղծագործությունից է.  
 Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,  
 Ճամփես՝ բախտիս սարերն ի վեր...  
 ----- 0,5
5. «Հայ ժողովրդի երգը» նախապես ի՞նչ վերնագիր է ունեցել:  
 ----- 0,5
6. Պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված.  
 Ձյունն էլ արևի ջահել համբույրից  
 Ուրախ լալիս է դաշտերի վրա  
 ա. մակդիր բ. հանգավորում գ. համեմատություն դ. անձնավորում 0,5
7. Ո՞ր պնդումն է սխալ Պ. Սևակի մասին.  
 ա. Նրա զարգացմանը նպաստել է բուռն ընթերցանությունը:  
 բ. Սևակը հռչակվեց որպես բանաստեղծ, բայց նա նույնքան խոշոր գրականագետ է ու քննադատ:  
 գ. Սևակը ծնվել է 1924թ.- ին Սիսիանի շրջանի Լոր գյուղում:  
 դ. 1948թ. -ին լույս է տեսնում նրա առաջին գիրքը՝ «Անմահները հրամայում են»:  
0,5
8. Ո՞ր շարքում են Պ. Սևակի ստեղծագործությունները.  
 ա. «Մոր ձեռքերը», «Քելե՛, լառ», «Անտառում»  
 բ. «Անլռելի Ջանգալատուն», «Վարք մեծաց», «Մասրենի»  
 գ. «Մոր ձեռքերը», «Քիչ ենք, բայց հայ ենք», «Նորօրյա աղոթք »  
 դ. «Թագադրում», «Հայ ժողովրդի երգը», «Էքսպրոնտ» 0,5

9. Ո՞ր բառերն են բաց թողած.  
Եթե գերել ենք՝ լոկ մեր....., 0,5  
Եթե տիրել ենք՝ լոկ մեր.....

10. Ճիշտ դասավորի՛ր «Մոր ձեռքերը» բանաստեղծության տողերը.  
1.Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը  
2.Բայց թռռան հետ նոր ուժ գտած  
3.Այս ձեռքերը՝ ուժը հատած  
4.Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը 1

11.Ո՞ր պոեմը Սևակին համաժողովրդական ճանաչում բերեց.  
ա.«Անլռելի զանգակատուն» բ.«Եվ այր մի՛ Մաշտոց անուն» 0,5  
գ.«Երգ երգոց» դ.«Անհաշտ մտերմություն»

12.Ո՞րն է Համո Սահյանի ծննդավայրը.  
ա.Լոր գյուղը բ. Գորիսը  
գ.Կարսը դ.Գյումրին 0,5

13.Բանաստեղծության տողերի ո՞ր հաջորդականությունն է ճիշտ.  
1.Թե իմանար մեզ ինչից է գրկում  
2.Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու  
3.Չորս հոգով էինք, էլ ոչ ոք չկար  
4.Առավոտն ինքն էլ երևի չգար  
ա. 3, 4, 1, 2 բ. 2, 3, 1, 4 գ. 4, 2, 3, 1 դ.2, 3, 4, 1 0,5

14.Ինչի՞ հիման վրա է գրված Ս. Կապուտիկյանի « Քելե՛, լաո» բանաստեղծությունը: 1

15.Ո՞ր ստեղծագործությունից է, ո՞վ է հեղինակը.  
Մոտիկ կաղնին ամեն ճայթյունի հետ վախից սրսփում և իր մտքում կաղնիորեն շնորհակալ էր լինում ժայռին: 1

16. Ո՞ր պնդումն է ճիշտ Մ. Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքի վերաբերյալ.  
ա.Մամփրեին 80 տարեկանում այբուբեն է սովորեցնում թռռնուհին:  
բ. Մամփրեն գրել – կարդալ սովորեց լիկկայանում;  
գ.Նրան այբուբենը սովորեցրել էր իր ուսուցիչը՝ տեր Հարությունը;  
դ. Մամփրեին այբուբենը սովորեցրել էր մի մշեցի ուսուցիչ, որին սուլթանը կախաղան էր հանել:



9.Ճիշտ դասավորի՛ր «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծության տողերը.

- 1.Պարզապես մենք էլ պիտի ընդունենք
- 2.Որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում
- 3.Երկինքը իր ճիշտ պատճենը հանում
- 4.Որ մենք, միայն մենք Արարատ ունենք,
- 5.Մենք մեզ ոչ ոքից չենք գերադասում

1

10.Պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված.

Երկինք պարզված սյուն են դառել այս ձեռքերը,  
Որ չփլվի իր տան սյունը

ա.փոխաբերություն  
գ.համեմատություն

բ.մակդիր  
դ.անձնավորում

0,5

11. Ո՞րն է Հ. Սահյանի իսկական ազգանունը.

ա.Իսահակյան  
բ. Սահակյան

գ. Գրիգորյան  
դ.Կարապետյան

0,5

12.«Իմ քարափներն ու ես» բանաստեղծության տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ.

- 1.Քնով չանցնեք, չքնեք
- 2.Քնեցիք էլ, արթնացաք
3. Ինձ բացակա չդնեք
- 4.Ձեր շուրջը ամպ է, կայծակ

ա. 1, 2, 4, 3

բ. 4, 1, 2, 3

գ.4, 2, 1, 3

դ. 2, 1, 4, 3

1

13.Հ .Սահյանի ստեղծագործություններից ո՞րը շարք չէ.

ա.Որոտանի եզերքին  
բ. Անտառում

գ.Սեզամ, բացվի՛ր  
դ.Քարափների երգը

0,5

14.Ո՞ր տողով է վերջանում Ս. Կապուտիկյանի «Քելե, լաո՛» բանաստեղծությունը.

- ա.Քելե, լաո, քելե՝ էրթանք մըր էրգիր  
բ.Իմա՞լ կեղնի, իմալ չերթանք մըր էրգիր  
գ.Պիտի փլվի՝ ամեն պատնեշ, ամեն սուտ  
դ.Պիտի երթան՛ք, պիտի երթանք մեր երկիր

0,5

15.Ո՞վ է «Կանաչ դաշտը» պատմվածքի հեղինակը.

1. Համո Սահյան
- 2.Մուշեղ Գալշոյան
3. Հրանտ Մաթևոսյան
4. Պարույր Սևակ

0,5

16.Ո՞ր պնդումն է սխալ «Կանաչ դաշտը» պատմվածքի վերաբերյալ.

ա.Շների հաջոցը պայթեց գայլի հենց ականջների մեջ, և գայլը փախավ:

բ.Մայր ձին կատաղությամբ ձգվեց դեպի գայլը, և պարանը կտրվեց ու մտրակվեց մոր ոտքերին:

գ. Փոքրիկ հովվին դիմացի բլուրներից զգուշացրին, որ գայլը հարձակվել է ձիու վրա:

դ.Շները քրքրում էին գայլի մեջքը, վիզը, քաշքշում էին ականջներից, իսկ նա

պաշտպանվում էր:

1

Տարբերակ 3

1. Ո՞ր երկտողի հեղինակը Շիրազը չէ.  
 ա. Եվ հրովարտակ արձակեն մի խիստ,  
 Որ աղբյուրները հավերժ կարկաչեն:  
 բ. Կթուլանաս, եթե ազնվությանդ ոսկեկար  
 Չավելացնես ըզգուշությունն իբրև աստառ:  
 գ. Բախտս աստղերն են վեր պահել,  
 Ջահել են ես ու ձիս ջահել:
- 0,5
2. Ո՞րը Հովհ. Շիրազի ժողովածուներից չէ.  
 ա. Հուշարձան մայրիկիս  
 բ. Մեր վագքը  
 գ. Քնար Հայաստանի  
 դ. Գարնանամուտ
- 0,5
3. Գրել Շիրազի՝ մորը նվիրված ժողովածուի անունը:
- 0,5
- 
4. «Թագադրում» բանաստեղծությանը վերաբերող ո՞ր պնդումն է սխալ.  
 ա. Բանաստեղծը ծուլվում է բնությանը, դառնում նրա մի մասնիկը:  
 բ. Հայ ժողովուրդը խոչընդոտներով լի ճանապարհը հաղթահարելու կամք ունի:  
 գ. Բանաստեղծի երջանկությունը պայմանավորված է ողջ մարդկության երջանկությամբ:  
 դ. Բանաստեղծությունը իմաստասիրական խոհ է հավերժի և կատարյալի մասին:
- 1
5. Ո՞ր բառն է բաց թողած.  
 Բարձրանամ գահը ..... լեռների ,  
 Արևն իբրև թագ իմ գլխին առնեն,  
 Հագնեն ծիրանին արշալույսների,  
 Գարնան թագավոր ինձ թագադրեն...
- |            |           |            |            |
|------------|-----------|------------|------------|
| ա. գմրուխտ | բ. լագուր | գ. կապույտ | դ. բարձրիկ |
|------------|-----------|------------|------------|
- 0,5
6. Նշվածներից ո՞րը փոխաբերություն չէ.  
 ա. Լոկ այն ժամանակ կլինեն երջանիկ,  
 Երբ որ երջանիկ լինեն ողջ մարդիկ:  
 բ. Հոգիս արթնացավ հարավի բույրից,  
 Ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա:  
 գ. Շանթն է բեկվում ճակտիս վրա,  
 Մահ՝ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա:
- 0,5
7. Ո՞ր շարքի բոլոր բանաստեղծությունների հեղինակն է Պ. Սևակը.  
 ա. Քիչ ենք, բայց հայ ենք, Հավատում են, Մոր ձեռքերը  
 բ. Անտառում, Մասրենին, Նորոյա աղոթք  
 գ. Հայ ժողովրդի երգը, Ուր որ նայում են, Կարոտ  
 դ. Մի պահ զղջում են, Ուզում են, Էքսպրոմտ
- 0,5
8. Ո՞ր բանաստեղծությունն է ավարտվում հետևյալ տողով.  
 Կա՛նք: Պիտի լինեն՛ք: Ու դեռ շատանա՛նք:
- 0,5

9. Համապատասխանեցնել հեղինակներն ու նրանց ստեղծագործությունները.

- |                   |                        |
|-------------------|------------------------|
| 1. Ս. Կապուտիկյան | ա. Անլռելի գանգակատուն |
| 2. Հ. Սահյան      | բ. Հայ ժողովրդի երգը   |
| 3. Պ. Սևակ        | գ. Անտառում            |
| 4. Հ. Շիրազ       | դ. Քելե, լառ           |

1

10. Բառերը տեղադրել ճիշտ հաջորդականությամբ.

- Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար  
 Մեզ աշխարհում .....  
 Մեզ աշխարհում.....  
 Մեզնից երբեք չկշտացած  
 Փոշի սրբող, լվացք անող  
 Անվերջ ....., անվերջ ..... այս ձեռքերը:

ա. դատող, բ. բանող, գ. շահած- պահած, դ. ծնած- սնած

0,5

11. Ո՞րն է Պ. Սևակի `1948թ.-ին լույս տեսած առաջին գիրքը:

- |                           |                  |
|---------------------------|------------------|
| ա. Մարդը ավի մեջ          | բ. Եղիցի լույս   |
| գ. Անմահները հրամայում են | դ. Սիրո ճանապարհ |

0,5

12. Ո՞ր պատկերը Հ. Սահյանի ստեղծագործություններից չէ.

- Ա. Իրար փաթաթված ստվեր ու կածան ու հետքեր, հետքեր, հետքեր մարդկային  
 Բ. Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե  
 Գ. Կախվել է ժայռը անդունդի վրա  
 Դ. Եկած ուսերով Արագած սարի ուսերին հենված Սասնա տուն չկա

0,5

13. «Իմ քարափներն ու ես» բանաստեղծության տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ.

1. Քնով չանցնեք, չքնեք
2. Քնեցիք էլ, արթնացաք
3. Ինձ բացակա չդնեք
4. Ձեր շուրջը ամպ է, կայծակ

ա. 1, 2, 4, 3      բ. 4, 1, 2, 3      գ. 4, 2, 1, 3      դ. 2, 1, 4, 3

0,5

14. Ո՞ր ստեղծագործությունից է ընտրված հատվածը, և ո՞վ է հեղինակը.

Կայծակը չոր ճայթունով բախվեց ծառին, մի կողմ շարտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ:  
 Ժայռը կարծր էր, կայծակը հագիվ թե կարողացավ գորշ ժայռից պոկել քարի մի երկու փշուր:

1

15. Վերականգնե՛ք բաց թողած բառերը / Մ. Գալշոյանի «Մամփրե արքան» /.

Երեկ – մյուս օր է հայտնվել, բայց գյուղի անունը արդեն աղավաղել – հարմարեցրել է իր  
 լեզվին, իսկ աղբյուրը` ....., կնքել է .....

1

16. Ո՞ր տողով է վերջանում Ս. Կապուտիկյանի «Քելե, լառ՝» բանաստեղծությունը.

- |  |
|--|
| ա. Քելե, լառ, քելե՝ էրթանք մըր էրգիր   |
| բ. Իմա՞լ կեղնի, իմալ չերթանք մըր էրգիր |
| գ. Պիտի փլվի՝ ամեն պատնեշ, ամեն սուտ   |
| դ. Պիտի երթանք, պիտի երթանք մեր երկիր  |

0,5

Տարբերակ 4

1. Ո՞ր բառակապակցությունը չի բնորոշում Հ. Շիրազի «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծության քնարական հերոսին.

ա. դժվարությունները հաղթահարելու կամք	բ. աներեր հավատ	
գ. չնահանջելու համառություն	դ. չարության ձգտում	0,5

2. Ո՞վ է «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծության քնարական հերոսը.		
ա. մայրը	բ. բանաստեղծը	
գ. հայ ժողովուրդը	դ. հեղինակը	0,5

3. «Էքսպրոմտ» բանաստեղծությունը Հ. Շիրազը գրել է.		
ա. Հայրենական պատերազմի առաջին օրերին		
բ. Եղեռնի ժամանակ		
գ. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին		
դ. Հայրենական պատերազմի ավարտին՝ մեծ հաղթանակի օրը		0,5

4. Ո՞ր բառն է բաց թողած.		
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես		
Դուք հողմերի պես .....վայրագ		
ա. ոռնացիք	բ. գոռացիք	գ. ճչացիք
		դ. շաչեցիք
		0,5

5. Ո՞ր ստեղծագործություններն են կոչվում <u>էքսպրոմտ</u> :	05
---	----

6. «Թագադրում» բանաստեղծությանը վերաբերող ո՞ր պնդումն է սխալ.		
ա. Բանաստեղծը ծուլվում է բնությանը, դառնում նրա մի մասնիկը:		
բ. Հայ ժողովուրդը խոչընդոտներով լի ճանապարհը հաղթահարելու կամք ունի:		
գ. Բանաստեղծի երջանկությունը պայմանավորված է ողջ մարդկության երջանկությամբ:		
դ. Բանաստեղծությունը իմաստասիրական խոհ է հավերժի և կատարյալի մասին:		1

7. Ո՞րն է Պ. Սևակի ծննդավայրը.		
ա. Չանախչի	բ. Երևան	
գ. Գյումրի	դ. Ջանգեզուր	0,5

8. Պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված.		
Այս ձեռքերը՝ մոր ձեռքերը, Հինավուրց ու նոր ձեռքերը....		
ա. փոխաբերություն	բ. մակդիր	
գ. հակադրություն	դ. համեմատություն	0,5

9. Ո՞ր շարքի բոլոր բանաստեղծությունների հեղինակն է Սևակը.		
ա. Մոր ձեռքերը, Հավատում եմ, Վարք մեծաց		
բ. Անտառում, Մասրենին, Նորօրյա աղոթք		
գ. Հայ ժողովրդի երգը, Ծխանի ծուխ, Կարոտ		
դ. Մի պահ զղջում եմ , Ուզում եմ, Գարնանամուտ		0,5

10.Պ. Սևակի ո՞ր բանաստեղծությունից է բերված հատվածը.  
Հօգուտ արդարի և արեգակի  
Գիտենք քվեարկել մեր կյանքով նաև....

0,5

11. Ո՞ր պնդումը չի վերաբերում Հ. Սահյանին.

ա. Մասրենին իր երկրի կերպարն է

բ.«Անտառում» բանաստեղծության մեջ աշնանայի պատկերներ են:

գ.Գաղթի ճամփան բռնած ծերունուն չի հետաքրքրում, թե «կա սահման ու կա վեճ»:

դ.«Իմ քարափներն ու ես» բանաստեղծությունը զետեղված է «Ինձ բացակա չդնեք» գրքի մեջ:

1

12.Նշվածներից ո՞րը Հ. Սահյանի ժողովածուներից չէ.

Ա.Տաղարան

բ.Որոտանի եզերքին

գ. Սեզա'մ, բացվի'ր

դ.Քարափների երգը

0,5

13. Ո՞ր պնդումն է ճիշտ Մ. Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքի վերաբերյալ.

ա.Մամփրեին 80 տարեկանում այբուբեն է սովորեցնում թռռնուհին:

բ. Մամփրեն գրել – կարդալ սովորեց լիկկայանում;

գ.Նրան այբուբենը սովորեցրել էր իր ուսուցիչը՝ տեր Հարությունը;

դ. Մամփրեին այբուբենը սովորեցրել էր մի մշտեցի ուսուցիչ, որին սուլթանը կախաղան էր հանել:

1

14.Ո՞վ է « Կանաչ դաշտը » պատմվածքի հեղինակը

ա.Հրանտ Մաթևոսյան

գ. Մուշեղ Գալշոյան

բ.Սիլվա Կապուտիկյան

դ.Համո Սահյան

0,5

15. Ինչո՞վ է ավարտվում « Կանաչ դաշտը » պատմվածքը:

1

16.Ղասավորել տողերը ճիշտ հաջորդականությամբ/ Ս. Կապուտիկյան «Քելե', լաո»/.

1.«Քելե', լաո, քելե', էրթանք մըր էրգիր»

2.Ու ծխի մեջ կսկծում է մի ծերուկ

3.Գիշեր – ցերեկ նույն երգն է իմ ունկերում

4.Ձայնի տեղը ծուխ է ելնում այդ երգից

ա. 3, 4, 2, 1

բ. 4, 3, 2, 1

գ. 3, 2, 1, 3

դ. 2, 1, 4, 3

0,5